

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Պայտրնի Վարչակազմը Ու Հայութեան Ակնկալիքները

Միացեալ Նահանգներու նորընտիր նախագահ Ծո Պայտրնի վարչակազմէն ներս ընդգրկուած են արտաքին քաղաքականութեան մէջ երկար տարիներու փորձառութիւն ունեցող ու միջազգային իրադարձութիւններու ելեւէջներուն մօտէն ծանօթ պաշտօնեաներ:

Ամերիկահայ կազմակերպութիւնները արդէն իսկ սկսած են հրապարակաւ ներկայացնել իրենց ակնկալիքները Սպիտակ Տունէն եւ Պետական Գրասենեակէն ու կը սպասեն, որ անոնք աւելի մօտէն հետաքրքրուին ու գործնական մասնակցութիւն բերեն յատկապէս Արցախի հարցով ապահովելու համար մեր ժողովուրդի անվտանգութիւնը ու ինքնորոշման իրաւունքը:

Նորանշանակ Պետական Քարտուղար Էնթրնի Պլինքըն իր պաշտօնին վրայ հաստատուելէն առաջ, Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս տեղի ունեցած լսումներու ընթացքին բանաւոր ու գրաւոր կատարեց բաւականին ուշագորաւ յայտարարութիւններ, որոնք յոյս կը ներշնչեն որ, Միացեալ Նահանգները պատրաստ է դուրս գալու Թրամփի վարչակազմի որդեգրած «Առաջ Ամերիկան» քաղաքականութենէն, աւելի մօտէն ներգրաւուելու երկրագունդի տարբեր ծայրամասերէն ներս շարունակուող հակամարտութիւններուն մէջ, իր խօսքը ըսելու եւ լուծումներ ապահովելու նպատակով դերակատարութիւն ունենալու ուղղութեամբ:

Իր վկայութիւններու ընթացքին Պլինքըն անդրադառնալով դարաբաղեան վերջին պատերազմին յայտնեց, որ Գոնկրէսի եւ պաշտպանութեան նախարարի հետ համագործակցելով նոր կառավարութիւնը կը յստակացնէ Հայաստանի ու տարածաշրջանի կարիքները անվտանգութեան բնագաւառէն ներս: Ան հաւաստիացուց, որ ինք նոր լիցք պիտի հաղորդէ Ղարաբաղի խնդրի յարատեւ կարգաւորում գտնելու ԱՄՆ-ի ջանքերուն, շեշտելով, որ լուծումը պէտք է երաշխաւորէ Լեռնային Ղարաբաղի անվտանգութիւնը եւ բացառէ նոր պատերազմի բռնկումը:

Պլինքընի այս յայտարարութիւնները կու գան արտացոլացնելու Ծո Պայտրնի պատերազմի

### Էնթրնի Պլինքըն. «Լուծումը Պէտք է Երաշխաւորէ ԼՂ Անվտանգութիւնը Եւ Բացառէ Նոր Պատերազմի Բռնկումը»

Ամերիկեան Ծերակոյտը հաստատեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղար պաշտօնին էնթրնի Պլինքընի թեկնածութիւնը: Նախքան այդ, Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս տեղի ունեցած լսումներէն յետոյ Պլինքըն նաեւ գրաւոր վերահաստատած է դիրքորոշումը նոր վարչակազմի օրօք հայ-ամերիկեան յարաբերութիւններու վերաբերեալ:

Բանաւոր լսումներու ընթացքին, Պլինքընին հարցեր ուղղած էր Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի ղեկավար՝ Պոպ Մենենտեը, որ դատապարտած էր Ատրպէյճանի յարձակումը Ղարաբաղի վրայ եւ թուրքիոյ սադրիչ գործողութիւնները այդ պատերազմին:

Բանաւոր լսումներէն յետոյ Մենենտեանին ներկայացուցած գրաւոր պատասխաններով Պլինքըն վերահաստատած է ժողովրդավարական կառավարումը եւ տնտեսական աճը խթանելու նպատակով Հայաստանին անվտանգութեան աջակցութիւն եւ օգնութիւն տրամադրելու կարեւորութիւնը, քանի որ ժողովրդավարութիւնը եւ տնտեսութեան աճը կը նպաստեն երկրի դիմացկունութեան:

Անդրադառնալով դարաբաղ-



Էնթրնի Պլինքըն Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս տեղի ունեցած լսումներու ընթացքին

եան վերջին պատերազմին՝ ԱՄՆ արտաքին գերատեսչութեան ղեկավարը գրած է, որ նոր վարչակազմը կը վերանայի անվտանգութեան ասպարէզէն ներս Ատրպէյճանին տրամադրուող օգնութիւնը: Պլինքընի հաղորդմամբ, հարկ եղած պարագային նոր կառավարութիւնը պատրաստ պիտի ըլլայ վերականգնել յայտնի 907 բանաձեւը:

Պետական քարտուղարի թեկնածուն գրաւոր պատասխաններով նաեւ նշած է, որ «Գոնկրէսը եւ

պաշտպանութեան նախարարի հետ համագործակցելով՝ նոր կառավարութիւնը կը յստակացնէ Հայաստանի ու տարածաշրջանի կարիքները անվտանգութեան բնագաւառէն ներս»:

Էնթրնի Պլինքըն հաւաստիացուցած է, որ ինք նոր լիցք կը հաղորդէ Ղարաբաղի խնդրի յարատեւ կարգաւորում գտնելու ԱՄՆ-ի ջանքերուն, նշելով, որ լուծումը

### Նիկոլ Փաշինեան. Չենք Առնել Այնպիսի Քայլ, Որ Ժողովուրդը Կը Զրկէ Իշխանութեան Վերաբերեալ Որոշումներ Կայացնելու Հնարաւորութենէն

«Իշխանութիւնը պատկանում է ժողովրդին, եւ իշխանութեան վերաբերեալ որոշումներ պէտք է կայացնի ժողովուրդը, իշխանութեան ճակատագիրը պէտք է որոշի ժողովուրդը: Մենք չենք անի այնպիսի քայլ, որը ժողովրդին կը զրկէ իշխանութեան վերաբերեալ որոշումներ կայացնելու հնարաւորութիւնից եւ լծակներէից եւ իշխանութեան հարցը կը տեղափոխի փակ սենեակներում քննարկումների տրամաբանութեան», - Աժ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ անդրադառնալով իր հրաժարականի հարցին:

Վարչապետը ըսաւ, որ իր առաջարկը՝ արտահերթ ընտրութիւններու հարցով խորհրդակցութիւններ ընելու վերաբերեալ, կը շարունակէ մնալ ուժի մէջ: Բայց խորհրդարանական ուժերը կը մերժեն այդ: «Եթէ խորհրդարանական ընդդիմադիր ուժերը շարունակեն մերժել այդ տրամաբանութիւնը, մենք համապատասխան դիրքորոշում կը ձեւաւորենք արդէն այդ իրողութեան նկատմամբ: Բայց հարցը այն է, որ բոլոր



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

հարցերի լուծման համաթեքսթում վճռորոշ խօսքը պատկանում է ժողովրդին: Եւ մենք թոյլ չենք տալ այնպիսի զարգացում, որ այս բանաձեւը խախտուի», - նշեց Փաշինեան:

Ըստ Փաշինեանին՝ եթէ այդ ուժերը կը մերժեն արտահերթ ընտրութիւններ կատարել, կը նշանակէ, որ հիմախուրէ կ'արձանագրեն իրենց պարտութիւնը արտա-

### Եւրոպական Խորհրդարանը Կը Շեշտէ, Թէ Ղարաբաղեան Խնդրի Կարգաւորումը Դեռ Գտնուած Չէ

Եւրոպական խորհրդարանը ընդունած է «Ընդհանուր արտաքին եւ անվտանգային քաղաքականութիւն» գեկոյց-բանաձեւով խստորէն դատապարտած է թուրքիոյ ապակաշունչ սադրիչ գործողութիւնը այն ալ անկայուն Հարաւային Կովկասի, կոչ ըրած է գերծ մնալու դարաբաղեան հակամարտութեան միջամտելէն, ներառեալ՝ Ատրպէյճանին ռազմական աջակցութիւն ցուցաբերելէ, եւ նպաստելու խաղաղութեան:

Եւրոպական խորհրդարանը նաեւ դատապարտած է Սուրիայէն եւ այլ վայրերէն թուրքիայով հասնող զինուորական տեղափոխումը Լեռնային Ղարաբաղ:

Եւրոպացի պատգամաւորները ափսոսանք յայտնած են, որ թուրքիան փորձած է նաեւ խարխիւլ հակամարտութեան կարգաւորմամբ զբաղող ԵԱՀԿ Մինսքի խումբը:

Չեկոյց-բանաձեւին մէջ Եւրոպական խորհրդարանը ողջունած է Նոյեմբեր 9-ին ստորագր-



## ԼՈՒՐԵՐ

### Լիլիթ Մակունց Անդրադարձած է ԱՄՆ-ի Մեջ Դեսպան Նշանակուելու Լուրերուն

Աժ «Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց հաստատած է, որ իր ԱՄՆ-ի դեսպան նշանակուելու վերաբերեալ հարցը օրակարգի վրայ է, նման քննարկումներ կան, միեւնոյն ժամանակ աւելցուցած է, որ դեռ վերջնական որոշում չկայ: Երէկ, լուրերը շրջանառուած են, որ վարչապետի որոշումով՝ Մակունց, որ 2018-ի Մայիսին նշանակուած էր մշակուցի նախարար, ապա քանի մը ամիս ետք ընտրուած պատգամաւոր ու անցած օրէնսդիր մարմին, շուտով պիտի նշանակուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ ՀՀ դեսպան:



»Իմ Քայլը« խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց

Լիլիթ Մակունց «Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամարազեանի հետ» հաղորդման հիւրն էր:

Այն հարցին թէ ըստ տեղեկութիւններուն՝ Մակունց ստացած է ամերիկեան կողմի հաւանութիւնը եւ շուտով կը պատրաստուի մեկնել Ուաշինկթըն ստանձնելու ԱՄՆ-ի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանի դիւանագիտական պաշտօնը, ինչ որ շատ մեծ պատասխանատուութիւն է, Մակունց ըստ է, «օրակարգում կայ նման հարց, սակայն այն դեռեւս քննարկման փուլում է, վերջնական երբ յստակեցում լինի, այն ժամանակ հանրային հրապարակում նոյնպէս կը լինի:

Իսկ այն դիտարկման թէ ըստ տեղեկութիւններուն արդէն համաձայնագիր կայ այն չեղած է, «Ոչ, չկայ, հարցը օրակարգում կայ, բայց դեռեւս որեւէ հաստատում

չկայ: Այս կարեւոր դիւանագիտական պաշտօնին համար, փորձառութիւն ունենալու կարեւորութեան վերաբերեալ, Լիլիթ Մակունց մեկնաբանած է, «Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութիւնում դեսպանները նշանակում են դիւանագիտական նշանակումով կամ քաղաքական նշանակումով, քաղաքական նշանակումների համար որեւէ սահմանափակում չկայ: Ինչ վերաբերում է իմ փորձին, ապա կարծում եմ՝ այն հանրային է եղել խորհրդարանական դիւանագիտութեան շրջանակներում, իսկ փորձս, ի հարկէ, չափազանց կարեւոր է, սակայն որոշ զէպքերում ամենատաճանային դերակատարումը չունի»:

### Սօս Ապագային Հայաստանի Բնակչութեան 3 Տոկոսը Պիտի Կարողանայ Պատուաստ Ստանալ

Նախնական տուեալներով՝ արդէն փետրուարի կէսերուն կամ մարտի սկիզբը Հայաստանի բնակչութեան երեք տոկոսը կարող է պատուաստ ստանալ քովիտի դէմ: Առաջին փուլով կը պատուաստուին տարեցներու խնամքի կեղրոններու բնակիչներն ու աշխատակիցները, բուժաշխատողները, ընկերային խնամքի կեղրոններու աշխատակիցները, 65 եւ բարձր տարիքի անձինք, 16-էն 64 տարեկան քրոնիկ հիւանդները: Հայաստանը ձեռք կը բերէ բրիտանական «AstraZeneca» ընկերութեան պատուաստը:



Մինչ «AstraZeneca»-ի Հայաստան հասնելը, չի բացառուիր այլ պատուաստի ներմուծումը, քանի որ բնակչութիւնները աշխոյժ ընթացքի մէջ են: Մասնաւորապէս, Հայաստանը ուսական «Sputnik V» պատուաստի 60 դեղաչափ օգնութիւն ստացած է՝ 30 հոգիի համար, եւս հազարը կը ստանան, այժմ բնակչութիւնները կ'ընթանան մեծ քանակի գնումներու համար: Պատուաստումները պարտադիր բնոյթ պիտի չկրեն, պատուաստ կը ստանան անոնք, որոնք ունին ցանկութիւն: «AstraZeneca»-

### Ձիանկիրեան Եւ Խաչատրեան Ընտրուեցան ԲԴԽ-ի Անդամ

«Իմ քայլը» խմբակցութեան կողմէ Բարձրագոյն դատական խորհուրդի անդամի թեկնածուներ առաջադրուած Գագիկ Զհանկիրեանն ու Դաւիթ Խաչատրեանը փակ գաղտնի քուէարկութեամբ ընտրուած են: Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքները՝ Աժ հաշուիչ յանձնաժողովի նախագահ Վահագն Յովակիմեան յայտարարեց, որ 132 պատգամաւորէն քուէարկութեան մասնակցած է 89-ը: Գագիկ Զհանկիր-

### Լեւոն Տէր Պետրոսեան Իր Տան Մէջ Հիւրընկալած Է ՀՀ-ի Սօս ՌԴ Դեսպանը



Ռուսաստանի դեսպան՝ Սերկէյ Քոփիրքին

ՀՀ Առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան

Յունուար 25-ին, ՀՀ Առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան իր տան մէջ հիւրընկալած է Հայաստանի Հանրապետութեան մօտ Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Սերկէյ Քոփիրքինին:

Այդ մասին դիմատետրի իր էջով յայտնած է Լեւոն Տէր Պետրոսեանի խօսնակ՝ Արման Մուսինեան: Շուրջ մէկուկէս ժամ տեւած զրոյցի ընթացքին, շօշափուած են

հայ-ռուսական յարաբերութիւններու շրջանակները ներառեալ փոխադարձ հետաքրքրութիւնները կարգին՝ Ատրպէյճան պահուող ռազմագերիներու վերադարձի հրատապ անհրաժեշտութիւնը, ինչ որ մեծապէս կը նպաստէ թէ՛ Արցախի եւ թէ՛ Հայաստանի հասարակական տրամադրութիւններու բարելաւման եւ տարածաշրջանային կարգաւորման հետագայ քայլերու յստակացման:

### «17 Ուժերի Միջեւ Որեւէ Տարածայնութիւն Զկայ». ԲՀԿ Պատգամաւոր

«17 ուժերի ներսում որեւէ տարածայնութիւն չկայ, 17 ուժերը յստակ իրենց յայտարարութիւններով հանդէս են եկել այս տարուայ սկզբին, որ սկսում են մարզային այցելութիւններ, որից յետոյ հետագայ անելիքների մասին կրկին կը հրապարակուի», - այսօր Յունուար 21-ին Աժ ձեռագրույցներու ժամանակ ըստ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Շաքէ Իսայեան անդրադառնալով մամուլի հրապարակումներուն, թէ ԲՀԿ կը հեռանայ 17 կուսակցութիւններէ: Ինչ կը վերաբերի ԲՀԿ-ի դիրքորոշման, ան ըսաւ. «Մենք խորհրդարանական երկրորդ խմբակցութիւնն ենք: Եւ բնական է, որ նաեւ որպէս խորհրդարանական ուժ՝ ԲՀԿ-ն իր գործունէութիւնը ծաւալելու է խորհրդարանում եւ օգտագործելու է խորհրդարանական բոլոր գործիքակազմերը, որպէսզի հասնենք այն նպատակին եւ այն պահանջին, որը մենք հնչեցրել ենք: Իսկ այդ նպատակը մէկն է՝ Նիկոլ Փաշինեանը պէտք է անցնուի հրաժարական տայ եւ հեռանայ, որից յետոյ պէտք է հնարաւորութիւն տրուի ՀՀ-ին կայունացնել իրավիճակը եւ փորձել շտկել մեր կոտորած մէջը»:

անընդունելի է, երբ լրատուամիջոցները կը փորձեն սեւ կատուներ փնտրել: «Եթէ ԲՀԿ-ում օրակարգի որեւէ փոփոխութիւն լինի, մենք կ'աշխատենք վերջնական չունենք, շատ յստակ այդ մասին կ'իրազեկենք: Մենք այս պահին էլ յստակ ասում ենք՝ որեւէ պառակտում 17 ուժերի ներսում չկայ: Այն օրակարգը, որը հնչել է համատեղ, մենք բոլորս միասնական գնում ենք՝ հասնելու վերջնակէտին», - աւելցուց Իսայեան:

Հարցին, թէ ինչո՞ւ ԲՀԿ-ն չի մասնակցի մարզային այցելութիւններուն, ան պատասխանեց. «Գուցէ մեր ծանրաբեռնութեան հետ կապուած մենք անձամբ մասնակցութիւն չենք ունեցել, բայց եւ վստահեցնում եմ, որ մեր մարզային տարածքային ներկայացուցիչները Հայրենիքի փրկութեան շարժման բոլոր հանդիպումներին ներկայ են լինում: Ինչ վերաբերում է պարոն Մառուկեանի յայտարարութեանը, ապա եւ կարող եմ եւս մէկ անգամ վերահաստատել, որ, այո, մեր կուսակցութեան դիրքորոշումը հետեւեալն է՝ ՀՀ քաղաքացիների հասցէին որեւէ հանգամանքում չի կարելի որեւէ վիրաւորական արտայայտութիւն հնչեցնել»:

Շաքէ Իսայեանի խօսքով՝ եանի թեկնածութեան կողմ քուէարկած է 86, իսկ դէմ՝ երեք պատգամաւոր, Դաւիթ Խաչատրեանի օգտին քուէարկած է 85 պատգամաւոր, Յունուար 21-ին, մէկ քուէարկութիւն անվաւեր ճանաչուած է:

Նշենք, որ խորհրդարանական 2 ընդդիմադիր ուժերը՝ «Բարգաւաճ Հայաստան»ը ու «Լուսաւոր Հայաստան»ը, չեն մասնակցած հարցի քննարկման, ինչպէս նաեւ քուէարկութեան: Անոնք այս գործընթացի դէմ պոչքթած էին:

Ձեր ծանուցումները Կստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին  
 Massis2@earthlink.net

### ԼՈՒՐԵՐ

## Պաշտպանութեան Նախկին Նախարար Դաւիթ Տօնոյեան Խօսած Է Պատերազմի Պարտութեան Պատճառներու Մասին

44-օրեայ պատերազմի ընթացքին, Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը (ՊՆ) գլխաւորող Դաւիթ Տօնոյեանի համոզմամբ՝ 1994 թուականէն հայկական զինուած ուժերու զբաղեցուցած տարածքներու պահպանման վերջնականատակը ոչ թէ պատմական արդարութեան վերականգնումն էր, կա՛մ արցախահայութեան եւ Հայաստանի երկարաժամկէտ ու կայուն անվտանգութեան ապահովումը, կա՛մ տնտեսական զարգացումը, այլ 26 տարի այդ տարածքներու պահպանմամբ բարենպաստ պայմաններ ստեղծուած են դարաբաղեան բանակցութիւններուն:



Պաշտպանութեան Նախկին Նախարար Դաւիթ Տօնոյեան

Տօնոյեան Սերժ Սարգսեանի նախագահութեան ժամանակ մօտ եօթ տարի՝ 2010-2017 թուականներուն պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալն էր, թաւշեայ յեղափոխութենէն օրեր անց՝ 2018-ի Մալխին նշանակուեցաւ պաշտպանութեան նախարար եւ թողեց պաշտօնը անցնել տարուայ Նոյեմբերին՝ Ատրպէյջանի հետ պատերազմին կրած պարտութենէն յետոյ:

Յունուար 25-ին հրատարակուած «Մեխիմաքսի» հետ զրոյցի ընթացքին, ան ըսած է. «Իմ խորին համոզմամբ՝ 1994 թուականից յետոյ հայկական զինուած ուժերի կողմից զբաղեցրած աշխարհագրական բնագծերի պայմաններում ամրաչինութիւնը, առաջնագծում մարտական հերթապահութեան կազմակերպումը եւ սպառազինութեամբ ժամանակակից սպառազինութեամբ եւ սարքերով երկարաժամկէտ առումով չէին լուծուած արցախահայութեան անվտանգութեան ապահովման ու տնտեսական զարգացման գերխնդիրը: Ո՞րն էր վերոյիշեալ բնագծերով սահմանազատուած տարածքների պահպանման վերջնականատակը՝ պատմական արդարութեան վերականգնումը, արցախահայութեան եւ Հայաստանի Հանրապետութեան երկարաժամկէտ եւ կայուն անվտանգութեան ապահովումը, տնտեսական զարգացումը, թէ՛ Արցախի միջազգայնօրէն ճանաչուած կարգավիճակի դիմաց տարածքների վերադարձման վերաբերեալ վարուող բանակցային գործընթացի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Վստահաբար՝ ոչ առաջինը, ոչ երկրորդը, ոչ էլ երրորդը: Երկարաժամկէտ եւ կայուն անվտանգութեան ապահովման ու տնտեսական զարգացման հարցերն առկա աշխարհաքաղաքական պայ-

մաններում եղած բնագծերով եւ հայեցակարգային պաշտպանական կեցուածքով չէին լուծուելու, ու բանակցութիւնների ձախողումը վաղ թէ ուշ յանգեցնելու էր պատերազմի: Ուստի, 26 տարի վարուող պաշտպանական եւ արտաքին քաղաքականութեան շրջանակներում՝ առկա ընկերային եւ ժողովրդագրատնտեսական հնարաւորութիւնների սահմաններում ոչ պատերազմական պայմաններում ապահովուել է չորրորդը՝ հայկական կողմի համար «շահեկան» կարգաւորման գործընթացի շարունակականութիւնը»:

Հարցազրոյցին Դաւիթ Տօնոյեան նաեւ խոստովանած է, որ Հայաստան չէ հասցուցած «պատրաստուելի «անհպում» պատերազմին»՝ հինգերորդ սերունդի սպառազինութեան կիրառմամբ»:

Տօնոյեան նշած է նաեւ, որ թերի գնահատուած են թուրքիոյ անմիջական եւ վարձկաններու զանգուածային ներգրաւումն ու մատակարարման ուղիներու ամբողջական արգելափակման վտանգները:

Անցեալ տարի Նոյեմբեր 10-ին՝ զինադադարի կնքման յաջորդ օրը, Հայաստանի հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցի ժամանակ, Դաւիթ Տօնոյեան յայտարարած էր, որ 44-օրեայ պատերազմի ընթացքին հայկական զինուած ուժերը կու՛տան են սպառազինութեան մատակարարման կատարեալ շրջափակման պայմաններով:

Ըստ Տօնոյեանին՝ ինք չէ կորողացած յաղթահարել պատերազմի պայմաններուն վարչապետ Պաշտպանութեան նախարարութիւն-Գլխաւոր շտապ հրամանատարական ուղղահայեցին վերաբերող անյատակութիւնը եւ անկէ առաջացած խոչընդոտները:

## «Իմ Քայլը» Պիտի Քննարկէ Սահմանադրութեան Փոփոխութեան Դարը

Ազգային ժողովի իշխող «Իմ Քայլը» խմբակցութիւնը մտադիր է փոխել Սահմանադրութիւնը, որպէսզի հնարաւոր ըլլայ լուծարել Ազգային ժողովը, առանց վարչապետի հրաժարականին:

Խմբակցութիւնը այս գաղափարը քննարկելու համար Ազգային ժողովը նիստի հրաւիրած է:

«Իմ Քայլը»-էն վահագն Յովակիմեան նախքան նիստի մեկնարկը «Ազա-

տութիւն»ի հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ ասիկա դեռ գաղափար է, այսօր կը քննարկեն, ապա վերջնական որոշում կը կայացնեն:

Սահմանադրական փոփոխութեան այս նախագիծը ընդունելու համար անհրաժեշտ է 88 պատգամաւորի ձայն, իսկ խմբակցութիւնը Նոյեմբերի եռակողմ յայտարարութենէն յետոյ ունի 83 պատգամաւոր:

## Վարչապետի ու Արցախի Նախագահի Գլխաւորութեամբ Կայացած Է Աստիճարկային Խորհրդակցութիւն



Փաշինեանի եւ Արայիկ Յարութեանի գլխաւորութեամբ տեղի ունեցած Անվտանգութեան Խորհուրդի Խորհրդակցութիւնը

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի եւ Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութեանի գլխաւորութեամբ Երեւանի մէջ տեղի ունեցած է Անվտանգութեան Խորհուրդի ընդլայնուած կազմով խորհրդակցութիւնը:

44-օրեայ պատերազմէն յետոյ ասիկա Արցախի ղեկավարի երկրորդ մասնակցութիւնն է Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի աշխատանքներուն՝ չնայած Ատրպէյջանի նախագահի ու արտաքին գործոց նախարարութեան հրատարակային դժգոհութեան պաշտօնական Երեւանի ու Ստեփանակերտի միջեւ կապերու առնչութեամբ:

«Առաջիկայում նման խորհրդակցութիւններ աւելի յաճախ պէտք է ընենք, որպէսզի մեր գործողութիւնները լինեն համադրուած», - ըստ կառավարութեան հաղորդագրութեան, ըսած է վարչապետ Փաշինեան՝ կարեւորելով խորհրդակցութեան Արցախի նախագահի մասնակցութիւնը՝ տեղեկատուութեան փոխանակման, մարտավարական եւ ռազմավարական առումով հետագայ ընթացքներու ծրագրման շրջանակէն ներս:

Արցախի նախագահի լրատուական ծառայութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Արայիկ Յարութեանն ողջունած է Հայաստանի կողմէն նման ձեւաչափով խորհրդակցութիւնները աւելի յաճախ ընելու նախաձեռնութիւնը՝ նշելով, որ «յետպատերազմեան ժա-

մանակաշրջանի անվտանգային ու ընկերայնութեան խնդիրների արագ յաղթահարման, մարտավարական եւ ռազմավարական առումով հետագայ անելիքների ծրագրման համաթեքսթում դրանք առանցքային նշանակութիւն ունեն»:

Ի դէպ, ո՛չ այս տարուայ Յունուարի 3-ին կայացած Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի նիստին, ո՛չ ալ այս խորհրդակցութեան ներկայ չէր անցեալ տարուայ Դեկտեմբերին Արցախի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար նշանակուած Վիթալի Բալասանեան՝ չնայած Բալասանեանի նշանակումէն երկու շաբաթ ետք նախագահ Արայիկ Յարութեանեան խօսած էր Արցախի Անվտանգութեան Խորհուրդի կարեւորութեան աճի մասին՝ օրինակ, խոստանալով, որ Արցախի պաշտպանութեան ու անվտանգութեան առնչուող նախագահի բոլոր հրամանագիրներն ու կառավարութեան որոշումները պիտի ընդունուին բացառապէս Անվտանգութեան Խորհուրդի դրական եզրակացութեամբ:

«Ազատութիւն»ի հարցումին ի պատասխան՝ Ֆինանսներու նախարարութեան այսօր յայտնեցին, որ ինչպէս 1994 թուականէն ի վեր, այս տարի եւս Հայաստանի կառավարութիւնը Արցախի կառավարութեան պիտի յատկացնէ միջպետական վարկ: 2021-ին պիտի տրամադրուի 64,7 միլիառ դրամ, իսկ 2020-ին յատկացուցած է 70 միլիառ:

## Արցախի Որեւէ Կարգավիճակ Ատրպէյճանի Կազմէն Ներս Պարզապետ Անհնար Ու Անընդունելի Է. Արայիկ Յարութեան

«Թէեւ դժուար պայմաններում, սակայն շարունակելու ենք պայքարը Արցախի Հանրապետութեան անկախութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ, իսկ որեւէ կարգավիճակ Ատրպէյջանի կազմում պարզապէս անհնար ու անընդունելի է», - այսօր՝ Յունուար 26-ին յայտարարած է Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութեանը՝ Արցախի նորաստեղծ ներքին գործոց նախարարութիւն այցելութեան ժամանակ, ուր նախարարութեան անձնակազմին ներկայացուցած է նախարար՝ կարեն Սարգսեան:

Անդրադառնալով յետ պատերազմական իրավիճակին ու վերականգնողական աշխատանքներուն՝ ԼՂ-ի նախագահը շեշտած է, որ Արցախին դժուար ու երկար ճանապարհ կը սպասուի երկրի վերականգնման ու զօրացման ուղղու-



Արցախի նախագահ Արայիկ Յարութեան

թեամբ, այնպիսի երկրի, ուր բոլոր արցախցիներ ապագայ պիտի տեսնեն ապրելու եւ արարելու:

# Վազգէն Մանուկեան Յայտարարած Է Եթէ Պէտք Ըլլայ Կը Դիմեն Ապստամբութեան

«Եթէ սահմանադրական ճանապարհը արդիւնք չտայ, պէտք է ապստամբութիւն անել», Յունուար 26-ին, Արարատի մարզի Արարատ քաղաքը տեղի ունեցած հերթական մարզային հանդիպման ընթացքին, յայտարարած է «Հայրենիքի փրկութեան շարժման» վարչապետի թեկնածու՝ Վազգէն Մանուկեան:



Ընդդիմութեան վարչապետի թեկնածու՝ Վազգէն Մանուկեան

«Դա ժողովուրդի բնական իրաւունքն է, այդ իրաւունքը ամբողջութեամբ է Միացեալ Նահանգներու Անկախութեան յայտարարութիւնում, գրուած է, որ եթէ կառավարութիւնը չի կարողանում կատարել իր պարտականութիւնները, ապա ժողովուրդն իրաւունք ունի ապստամբութեան: Գերմանիայի Սահմանադրութեան մէջ կայ, որ եթէ իշխանութիւնները խախտում են սահմանադրական կարգը, ժողովուրդն իրաւունք ունի ապստամբութեան: Չեն գնայ սահմանադրական ճանապարհով, կը գնան ապստամբութեամբ, որովհետեւ սա մեր ժողովուրդի, մեր երկրի ապագայի հարցն է», - յայտարարած է Մանուկեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը պահանջող շարժման վարչապետի թեկնածուն ըսած է, թէ պատերազմի հետեւանքով Հայաստան կորսնցուցած է ոչ միայն տարածքը եւ բնակիչը, այլեւ իր «տղամարդկութիւնը» եւ ակեղցուցած, որ «Նիկոլ գոռացողները տղամարդ չեն»: «Դա քաղաքական հարց չի, նրանց մէջ նամուս չկայ, խիղճ չկայ, ազգային ոչ մի բան չկայ»:

Մինչ հանդիպման մեկնարկը դուրսը լարուած էր վիճակը, Արարատի մշակուցի կեդրոնի մօտ հաւաքուած էին նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին սատարողները. ընդհարումներ եղած են:

## Էնթրնի Պլինթըն

Շարունակուած էջ 1-էն

պէտք է երաշխաւորէ Լեւոնային Ղարաբաղի անվտանգութիւնը եւ բացառէ նոր պատերազմի բռնկումը:

Այդ նպատակով, ըստ պետական քարտուղարի թեկնածու Պլին-

թընի, «Միացեալ Նահանգները պէտք է աշխուժացնէ ներգրաւուածութիւնը որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկիր եւ լրացուցիչ դիւանագիտական աշխատանք կատարէ՝ կասեցնելու համար երրորդ կողմերու հնարաւոր միջամտութիւնները»:

## Նիկոլ Փաշինեան

Շարունակուած էջ 1-էն

հերթ խորհրդարանական ընտրութիւններուն: «Քննարկումները շարունակուած են, եւ մենք պատրաստ ենք քննարկել բոլոր ուժերի հետ այդ օրակարգը: Բայց այն պայ-

մաններում, երբ ընդդիմութիւնն ասում է՝ ոչ մի արտահերթ ընտրութիւն, անտրամաբանական է, որ իշխող մեծամասնութիւնն ասի՝ չէ որ չէ, պէտք է լինեն արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ», - ակեղցուց Փաշինեան:

## Եւրոպական Խորհրդարանը

Շարունակուած էջ 1-էն

ուած հրադարարի համաձայնութիւնը՝ միեւնոյն ժամանակ աստիճանաբար յայտնելով, որ դարաբաղեան սթաթուս քուտն (իրավիճակը) փոխուած է ռազմական ուժի եւ ոչ թէ խաղաղ բանակցութիւններու միջոցով, եւ Եւրոպական Միութեան կողմէ ընելով ակտիւ նշանակալի ներգրաւուածութիւն ունենալու հակամարտութեան կարգաւորման գործով, «չթողնել տարածաշրջանի ճակատագիրը այլ տէրութիւն-

ներու ձեռքերուն մէջ»: Եւրոպական Խորհրդարանը խստօրէն դատապարտած է խաղաղ բնակիչներու սպանութիւնները, քաղաքացիական ենթակառուցուածքներու, սրբավայրերու թիրախ դարձնելը, քսանթային գինատեսակներու օգտագործումը, եւ կողմ ցրած է Հայաստանին ու Ատրպէյճանին վաւերացնելու քսանթային գինատեսակներու մասին համաձայնագիրը, որ կ'արգելէ այդ գինատեսակի օգտագործումը: Երկարատեւ կարգաւորումը

# Նախագահ Սարգսեանի Առողջական Վիճակին Մէջ Առկայ Է Բարելաւում

Նոր տիպի «Քորոնա» ժահրով վարակուած Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Արմէն Սարգսեանի ինքնազգացողութիւնը համեմատաբար բարելաւուած է, անոր առողջական վիճակին մէջ առկայ է դրական շարժ, սակայն ան դեռ կը գտնուի բժշկիչներու հսկողութեան տակ, կը յայտնէ նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը:



Նախագահ՝ Արմէն Սարգսեան

Նախագահը կը շարունակէ բուժումը տնային պայմաններու մէջ:

Արմէն Սարգսեան Հայաստան կը վերադառնայ Բժիշկներու թոյլտուութեան անմիջապէս ետք: Նախագահը կը շարունակէ աշխատիլ հեռավար՝ կատարելով իր սահմանադրական գործառնությունները:

Յունուար 3-ին Արմէն Սարգսեան Լոնտոնի մէջ ենթարկուած է ոտքի վիրահատութեան: Սակայն

նախագահի գրասենեակը հաղորդած, որ Արմէն Սարգսեանի մօտ ի յայտ եկած են նաեւ նոր տեսակի «Քորոնա» ժահրի ախտանշաններ. նախագահի հետազօտութեան արդիւնքը դրական եղած է:

## Պայտընի Վարչակազմը

Շարունակուած էջ 1-էն

օրերուն ունեցած դիրքորոշումը երբ ան կը քննադատէր Ղարաբաղի հարցով Թրամփի որդեգրած կրակորակական քաղաքականութիւնը:

Ամերիկահայութիւնը կը պահանջէ նաեւ տնտեսական աջակցութիւն Յայաստանին եւ Արցախին, յաղթահարելու համար պատերազմի հետեւանքով բազմապատկուած մարդասիրական կարիքները: Վերջին տարիներուն արտաքին օժանդակութեան ծիրէն ներս Յայաստանին ու Արցախին յատկացուող աջակցութիւնները հասած էին նուազագոյնի: Այժմ կ'ակնկալու, որ նոր վարչակազմը Գոնկուէսի հետ համագործակցաբար վերատեսութեան ենթարկէ ու օժանդակէ ժողովրդավարութեան ամրապնդման նպատակով Երեւանի նոր մօտեցումներուն:

ստեծելու տարբեր աշխարհամասերէն ներս՝ Սիջերկրական Ծովէն մինչեւ Կովկաս ու Արաբական աշխարհ: Ասոնց վրայ կու գայ ակելու Թուրքիոյ նախագահի վերջին տարիներուն թեքումը դէպի բռնապետական կարգերու հաստատում՝ ձերբակալելով ու բանտարկելով իր քաղաքական հակառակորդները, մտաւորականներ, լրագրողներ ու փակելով անկախ լրատուամիջոցները:

Աւելի քան տարի մը առաջ «Նիւ Եորք Թայմզ» թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին ճօ Պայտըն խօսած էր Երտողանի կառավարութիւնը ժողովրդավարական եղանակով տապալելու մասին՝ օժանդակելով ընդդիմադիր կուսակցութիւններուն: Այժմ արդէն նախագահ դարձած Պայտըն պէտք է իր այդ տեսակետները գործնականի վերածելու ուղղութեամբ քայլերու դիմէ՝ սկսելով տնտեսական պատժամիջոցներու կիրառումով:

Ինչ կը վերաբերի Յայկական Յեղասպանութեան, կը սպասի որ, Պայտըն վերահաստատէ իր դիրքորոշումը՝ Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ ու յառաջիկայ Ապրիլ 24-ի նախագահական իր խօսքին մէջ հետեւի Ներկայացուցիչներու Տան ու Ծերակոյտի օրինակին:

Նախագահական վերջին ընտրութիւններուն Յայ քուտարկողներուն մեծամասնութիւնը իր ձայնը տուաւ ճօ Պայտընին՝ հաւատալով անոր կարողութիւններուն ու անկեղծութեան: Այժմ կը սպասենք որ ան ուշադրութիւն դարձնէ Ամերիկահայութիւնը յուզող հարցերուն եւ ակնկալիքներուն:

«ՄԱՍԻՍ»

դեռ գտնուած չէ, խաղաղութեան հասնելու, տարածաշրջանի ապագայ իրաւական կարգավիճակի որոշման գործընթացքը պէտք է իրագործուի ԵԱՀԿ Մինսքի խում-

բի համանախագահութեան շրջանակներու ծիրէն ներս եւ հիմնուած ըլլայ վերջինի Հիմնարար սկզբունքներուն վրայ, ըսուած է փաստաթուղթին մէջ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԳՅՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ



## Secretary of State-Designate Reiterates Biden Pledge on The Armenian Genocide

WASHINGTON, D.C. – In response to questions posed by Senate Foreign Relations Committee Chairman Bob Menendez (D-NJ) and Senator Ed Markey (D-MA), U.S. Secretary of State-designate Antony Blinken reiterated the Biden-Harris’s campaign pledge to “recognize the Armenian Genocide,” and also expressed the importance of the Nagorno-Karabakh (Artsakh) peace process, among addressing other issues, reported the Armenian Assembly of America.

Responding to Senator Markey’s question on the Armenian Genocide, Secretary of State-designate Blinken reiterated Biden’s pledge to recognize the Armenian Genocide: “As a presidential candidate, President Biden pledged in his Remembrance Day statement to support a resolution recognizing the Armenian genocide. Our Administration will be committed to prioritizing human rights and ensuring such a tragedy is not repeated. The Administration will determine the wording for the White House statement to mark Remembrance Day once in of-



fice and will consult with Congress on this important issue.”

In addition to the Armenian Genocide, Blinken stated that the Administration will “reinvigorate U.S. engagement to find a permanent settlement to the Nagorno-Karabakh conflict that protects the security of Nagorno-Karabakh.” The Assembly fully supports this position. The safety and

Continued on page 3

## European Parliament Condemns Turkey’s Role in Karabakh War



BRUSSELS — The European Parliament has strongly condemned Turkey’s destabilizing role in the Nagorno-Karabakh conflict, accused Ankara of sending terrorist fighters to the conflict zone and called for an end to Turkish military aid to Azerbaijan.

In two resolutions adopted last week, the European Union’s legislative body also welcomed the Russian-brokered ceasefire that stopped the Armenian-Azerbaijani war on November 10. But it cautioned that the conflict remains unresolved.

One of the resolutions calls for a Karabakh settlement based on the Basic Principles, a framework peace accord that has long been jointly advanced by the three co-chairs of the OSCE Minsk Group: the United States, Russia and France. It stresses the “urgent need” to ensure “the security

of the Armenian population and its cultural heritage in Nagorno-Karabakh.”

Turkey provided full diplomatic and military support to Azerbaijan during the six-week war. Turkish combat drones heavily used by the Azerbaijani army are believed to have been a key factor behind Baku’s military victory. Ankara also recruited thousands of jihadist fighters from the Middle East to fight on Azerbaijan’s side.

The European Parliament resolution “strongly condemns the destabilizing role of Turkey which further undermines the fragile stability in the whole of the South Caucasus region.” It says the Turks should “refrain from any interference in the Nagorno-Karabakh conflict, including offering

Continued on page 2

## ACA Congratulates President Biden on his Inauguration



The Armenian Council of America (ACA) congratulates President Joe Biden on his inauguration.

On foreign policy, we are hopeful that this administration will reengage in the OSCE Minsk group and lead the efforts toward a lasting peaceful solution to the Nagorno-Karabakh (Artsakh) conflict based on the right to self-determination. We are optimistic on the Biden administration’s stance toward Turkey and Azerbaijan and will continue to advocate for economic sanctions against the Erdogan and Aliyev regimes. Both countries have systematically violated international laws, committed war-crimes, and supported domestic extremism/suppressing democratic efforts.

ACA looks forward to contributing its part in the Biden administration’s pledge to unite America. We will continue to advocate on behalf of Armenian-Americans and engage with elected officials on the issues important to our greater American communities.

We wish President Biden and his administration success.

Sincerely,  
Armenian Council of America

## Armenian Trucks Attacked in Georgia



Armenian heavy trucks were pelted with stones and damaged early on Monday as they drove through a region in Georgia mostly populated by ethnic Azerbaijanis, according to the Armenian Embassy in Tbilisi.

A statement released by the embassy said the incident took place near the village of Qvemo Ponichala just outside Tbilisi. It said unknown persons threw stones at the trucks and smashed some of their windshields before fleeing the scene.

“The trucks were then escorted by [Georgian] road police to the Georgian-Armenian border and crossed it,” read the statement.

The embassy added that Georgian law-enforcement authorities have launched a criminal investigation and

that it is “actively working” with them to ensure that the attackers are brought to justice and to “prevent a repeat of such incidents.”

The Georgian Interior Ministry issued no statements on the reported attack.

The Yerevan.today news service reported that more than 30 Armenian trucks were damaged in the incident. “Cargo shipments through Georgia are becoming very dangerous,” it quoted one of their drivers as saying.

The online publication also posted a mobile phone video that showed a truck cab littered with broken glass.

Qvemo Ponichala is located along a highway connecting Tbilisi to the

Continued on page 2

## Armenian Nuclear Power Plant's License to Be Extended Until 2026



YEREVAN (Arka) -- Armenia's State Nuclear Safety Regulatory Committee will extend the license for the operation of the Armenian NPP until 2026 after the successful implementation of all activities planned for this year, NPP CEO Eduard Martirosyan said last Friday during a discussion that involved Armenian Territorial Administration and Infrastructure Minister Suren Papikyan, Russian Ambassador to Armenia Sergey Kopyrkin and Yevgeny Salkov, the CEO of Russian Rosatom Service JSC, which is contracted by the government of Armenia to modernize the NPP.

According to the Rosatom Service, this year the scheduled halt of the plant will last longer than usual - 141 days. Such a long shutdown means that the remaining work for the modernization of the plant, including the annealing of the reactor vessel is to be completed.

According to Eduard Martirosyan, the 250-ton cranes of the reactor hall, which are necessary for the installation of the annealing unit, have to be modernized before the plant is brought to a halt along with unloading fuel and heavy equipment from the reactor.

"After the annealing procedure at the nuclear power plant is over, the physical and mechanical properties of the reactor vessel will be restored, and the plant can be operated after 2026," Martirosyan said.

In turn, Salkov noted that last year was not easy due to the coronavirus pandemic, but a large amount of work

was done by joint efforts with Armenian atomic scientists.

"The overhaul of the turbine generator has been completed, an instrumental examination of the drives of the reactor control and protection systems has been carried out, and instruments for non-destructive testing of metal have been checked," Salkov said.

He added that the plant is prepared for the modernization of the emergency cooling system of the reactor core and the recovery annealing of the reactor pressure vessel, the annealing unit has been delivered and its assembly has already been completed.

"Nuclear energy today secures for Armenia a proper level of energy independence and security. I appreciate the importance of the upcoming joint work with our Russian partners in the development of the sector. Development of our friendly relations is extremely important, since a wide field of joint activities opens up, both in the near future and more distant future," Minister Papikyan emphasized.

The Armenian Nuclear Power Plant is located some 30 kilometers west of Yerevan. It was built in the 1970s but was closed following a devastating earthquake in 1988. One of its two VVER 440-V230 light-water reactors was reactivated in 1995.

In March 2014, Armenian government decided to extend the plant's service life up to 2026. The service life extension has become possible thanks to a \$270 million Russian loan and a \$30 million grant.

## European Parliament Condemns

Continued from page 1

military support to Azerbaijan."

The resolution also deplores "the transfer of foreign terrorist fighters by Turkey from Syria and elsewhere to Nagorno-Karabakh, as confirmed by international actors, including the OSCE Minsk Group Co-Chair countries."

### Armenia Welcomes EU Parliament Resolution

Armenia hailed the European Parliament resolutions on Friday. "The European Parliament not only condemns war crimes against Armenians, but also stresses that these crimes should not go unpunished", Spokesperson for the Armenian Ministry of Foreign Affairs Anna Naghdalyan says.

"There are a number of impor-

tant provisions enshrined in the report-resolutions adopted by the European Parliament, which are related to the Azerbaijani aggression against Artsakh and Turkey's involvement in it, the committed war crimes, as well as the steps to be undertaken to eliminate the consequences of the aggression, especially to address humanitarian issues," Naghdalyan said in comments to Armenpress.

She particularly emphasized that the European Parliament not only condemned the war crimes, including the targeting of civilian population and infrastructure, places of worship, but also stressed that these crimes should not remain unpunished.

"We agree with the European Parliament's call for Turkey to refrain from any intervention in the Nagorno-

## Armenian Authorities to Start First Phase of COVID-19 Vaccination Beginning of March

YEREVAN -- Health authorities have announced plans to start vaccinating by the beginning of March an estimated 3 percent of Armenia's population against COVID-19.

Gayane Sahakyan, the deputy director of the Armenian National Center for Disease Control and Prevention, said on Friday that the first batch of a relatively cheap vaccine developed by the British company AstraZeneca and Oxford University will be delivered to the country soon.

Sahakyan said that the choice of the vaccine was made by the supplier, the COVAX Facility global partnership supported by the World Health Organization. COVAX signed a supply contract with the Armenian government late last year.

